

մարձակիր: Միթէ ես քիչ աշխատե-
րեմ' նորա համար. . . տես, ամօթ է. . .
իմա Պաւլիկ, Պաւլէ, իմա երջանկու-
թիւն. . . ես զքեզ միթէ քիչ սիրեցի. .
ինչ օրերու հասայ:

Կ'ուզէր ուրիշ բան մ'ալ աւելցնելու,
այլ չկրցաւ, գլուխը ուսիս վրայ դրաւ,
ձեռքերով վզիս պլուեցաւ, դողդջալով
սրտին խորերէն լացաւ, ողբաց. . .

ՔՈՌՈՒՅԼՈՎ

Այս հատուածը, ինչպէս և նախըն-
թացը, թարգմանելով ներկայ տարուոյս
ուսու օրագրէ մը, և տպելով Բազմալի:

պիս մէջ, կ'ուզենք դադափար մը տալ
ազգին ոգւոյն, ոչ 'ի Ռուսաստան բնա-
կող համազգեաց. և երկրորդ կանխա-
զեկոյց ընել հայ պատանեկութեան,
անփորձ հասակին վտանգներն, որով
և օգտաւէտ ծառայութիւն մեր հայկա-
զուն պառաւեալ մարց: Այս սովորա-
կան սրտաճմիկ դէպքը, զոր ջերմ
հոգւով զրած է հեղինակը, պաղ ա-
րեամբ կարգացողին վրայ, մեզ այն-
պէս կ'երևայ, որ կարելի չէ որ չը-
նէ ազդեցութիւն և չտայ օգտակար
դաս մը երիտասարդին ապագային
համար:

Թարգմ. Հ. ՔԵՐ. Վ. ՔՈՒՇԵՐԵԱՆ

ՅԵՒՐԻՊԻԻԵԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՅՆ

ՄԱՃ ԻՊՊՈՒՆԵՆԱՅ

Զոր ազդե հրեշտակն թեւեռակայ

Թեւաւ .

Ո՛վ դիք, դու Պոսիդոն, հայր իմ ես դու արդարեւ .
Ազերսից իմոց դու ունկըն մատուցես կամակար .
Թէ զխորդ կորեաւ, ասա, և կամ սրպէս կորակոր
Գաւազանն արդարութեան եհար ըզնա 'ի հարուածս:

Հրեշտակ .

Մէք ծովուն առնթեր կացեալ զեղերբքն աւելոծ,
Սանտերբք զերիւարաց թօթափէպք զվարսագեղս,
Աչք մեր թաթախ յարտասուս. մինչ հրեշտակ որ բանրեր՝
Ասէր՝ թէ ոչ ևս այլ յերկիրս յայս իպպոլիտ կարացէ
Ածել զոտս, առ 'ի քէն վրտարանդեալ եղկելին .
Եւ ահա ինքնին լալով բերէր ըզգոյթս զայս առ մեզ
ի ծովափն. և ըզկնի նորին ամբոխ բիւրաւոր՝
Սիրելի բարեկամաց հասակակից տողէր գունդ .
Եւ սակաւ մի յետ ժամու 'ի հեծութեանց լրճեալ նա,
« Առ ինչ տըրտունջս այս, ասաց, պարտ է հօրն անսալ բանից .
« Հնապա դուք, քարչեցէք 'ի կառս ըզձիս լրճաձիգս .
« Զի ոչ այլ ևս այս իմ քաղաք բընակութեան է կայան »:

Եւ ահա ընդ բանին ամենեքեան ձեռն 'ի գործ ,
 Գան ըզխօսս երազագոյն կազմ' և պատրաստ ամենայն
 Յանդիման նորին տեառն հանդերձեցաք զերուարս :
 Ըզսանձա առեալ 'ի բուռն երասանին ըզկառացն ,
 Եւ զոտսըն ագուցեալ յուշիկ և մեղմ յոտընկայս ,
 Առ զիս նախ բարբառեցաւ ձեռս 'ի յերկինս համբարձեալ .
 « Արամազդ , ոչ ևս կեցից' եթէ իցեմ չարագործ .
 « Տուր հօրս իմ' ազդ' որ 'ի կեանս և 'ի մահու նախատեսց » .
 Ասաց , և ըզխըթանն առեալ 'ի ձեռս խըթեաց խիստ ,
 Եւ ծառայք միահամուռ հուպ յերասանս երթայաք ,
 Ի չաւիզս' որ յԱրգոս , յԵպիգաւրոս ածեալ տանի :
 Այլ յորժամ յամայի յանմարդաձայն անկաք վայր ,
 Որ առ ծովուն սարոնեան կայ առ երի 'ի ցամաքն .
 Անդ գանգիւն' որպէս ինչ գետնադըրդորդ որոտման
 Արձակէր հընչիւն սաստիկ՝ ահեղաձայն սոսափիւն ,
 Եւ ուղիղ 'ի վեր ձիանըն կանգնեցին ըզգըլուխս
 Եւ զականջս . 'ի սիրտս մեր անկաւ ահեղ արհաւիրք՝
 Թէ ուտի հընչիւնքն իցեն . բայց յայիսն արկեալ զաչս՝
 Տեսաք յաղթ կոհակունս , որոց յերկինս մըկանունք
 Կըցէին , մինչև գտեսիլ ըմկիրոնի արգելուլ
 Յաչաց մերոց , ծածկէր իսթմոս և Ասկիւպեայ ապառաժք ,
 Ուռնուին անդէն կոհակըն , շուրջանակի և փըրփուր
 Անհընարին պըղպլակեալ ծովային ուռուցմամբ՝
 Յախուռան ընթանայր , ուր քառաձիքն էին կառք .
 Եւ անդուստ 'ի փըրփրելոց երեքալեան ծրփանաց
 Ժայթէր կոհակն 'ի վեր ցուլ՝ նորանըջան վայրենի .
 Ի նորին կառաչելոյն երկիր համակ դըռնէր
 Եւ սոսափիւն անկանէր մեծ 'ի տեսլենէ ճիւղին .
 Անդէն ահ և երկիւղ զերուարօքըն պատէր :
 Իսկ որ փորձ ամենեկին 'ի ձիական էր հանդէսս ,
 Ջերասանն յափըշտակեալ ձրգձրգէր յինքն ուժգնակի ,
 Որպէս այր նաւաստի որ զթիակէն ունիցի պինդ ,
 Եւ կախեալ կայր իրանամբք բոլոր մարմնովն յետրս կոյս :
 Իսկ ձիանն յատամունս ըզսանձա առեալ բըռնաբար ,
 Խօշաբար վարէին՝ կառավարին ոչ զօրեալ ,
 Ոչ պախցաց և ոչ կառացըն կարացեալ արգելուլ :
 Եւ 'ի հարթ եթէ 'ի դաշտ ուրեք ուղղէր ըզգընացոյ ,
 Յառաջոյ կանգնէր նըմին , և 'ի շաղացըն թիւրէր
 Ջըքառաձի կառսըն ցուլն զայրացուցեալ ահաբեկ .
 Ի ժայռուտս իսկ թէ վարէր հարեալ շամբուլ մոլութեամբ ,
 Լըռիկ ըզհետ ընթանայր , մինչև սխալեալ թիւրեցոյց ,
 Ջախձախեալ իսպառուսպուռ ըզբովանդակ կառացն ախս .
 Ամենայն խառնիխուռն . ոստեան յանուոցն չորունչաւք ,
 Եւ լիսռանցըն բււեռք . և հէգն այն ողորմելին
 Խաղայր թաւալըլոր մանրեալ գըլուխն սիրային ,
 Բըրդգըզեալ ըզմիս մարմնոցն և աշխարեալ ողորմ ձայն ,
 « Իլլայք , զադարեցէք որ 'ի մըսուրս իմ' սընայք ,
 « Եւ մի զիս կոչկոճիցէք , ով եղկելի հօրն իմ' ուխտ .

« Եւ չիցէ որ ուրեմն որ զանմեղս զիս փրկեսցէ :
 Շատք իսկ մեք իդձ լինէաք , այլ յետնեցաք 'ի գործոցն :
 Իսկ նա յերկիր անկանէր 'ի պատանայրն իւրոց ,
 Զրզիտեմ'լուծեալ որպէս՝ վերջին շրնչովն յըռնդունա .
 Զիք յաչաց եղեւ ձիանն , և սոսկալի նրչան ցլցն ,
 Եւ ոչ թէ հար զիտաց որ և ոչ տեսաւ հետք նորա :

Քարգմ. Հ. ԱՐՄԵՆ ՍԻՌԵՆԱՆ



ՍԻՌԵՆԱՆ ԿՈՒՄԱՆԱՆ

ՏՈՄԷՆԻՔԻՆՈՅ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԻՆ

Կումական Սիրիլային պատկերը ,
 զոր կը ներկայացընենք ընթերցողաց
 ներկայ պրակիս մէջ , ճամբնիքինոյ ե .
 ընելի պատկերահանին ունեցած զա .
 նազան և գեղեցիկ գործոց մէկն է ,
 որուն վարուց վրայ պատշաճ կը դա .
 տինք այս առթիւ համառօտ տեղե .
 կութիւն մը տալ : — Այս նշանաւոր
 անձս , կոչկաւարի մը որդի , ծնաւ 'ի

Պոլսնեա յամին 1551 : Ուսաւ զնկար .
 չութիւն Դիոնեսիոս Բալվարի քով ,
 որ օր մը զինքը ծեծելով վռնտեց ,
 որովհետեւ տեսաւ որ ծածուկ յզոս .
 տինոս Գարրաչիի գծադրութիւնքը
 կ'օրինակէր : Եւամբիէրի շարունակեց
 իր ուսումը այս վերջնոյս քով Ա .
 պանոյի հետ , որուն ցկեանս բարե .
 կամ եղաւ :